ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ութերորդ գումարման երրորդ նստաշրջանի օրակարգում լրացուցիչ ընդգրկել պարտադիր քննարկման ենթակա հետեւյալ հարցերը.

	Հարցի անվանումը	**Կոդը և հեղինակները**
1.	Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի 2021 թվականի գործունեության մասին տարեկան հաղորդումը	**206**-22.03.2022-ԳԿ
2.	«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին	Կ-**211**-25.03.2022-ՊԻ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
3.	Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամի ընտրություն	**215**-25.03.2022-
4.	Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամի ընտրություն	**218**-29.03.2022-
5.	Հայաստանի Հանրապետության դատախազության 2021 թվականի գործունեության մասին հաղորդումը	**220**-30.03.2022-ՊԻ
6.	«2021 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդում եւ «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2021 թվականի գործունեության վերաբերյալ» տարեկան զեկույց	**221**-30.03.2022-ՄԻ
7.	«Հանրային ծառայությունների գների աճի ազդեցությունը ազգաբնակչության կենսամակարդակի եւ տնտեսության վրա (առկա վիճակ եւ անելիքներ)» հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմայով հրատապ քննարկում անցկացնելու մասին	**227**-04.04.2022-
8.	Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամի	**228**-05.04.2022-

ընտրություն

9.	«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հավաքագրված եւ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված միջոցների օգտագործումն ուսումնասիրող Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը երկարաձգելու մասին	**231**-08.04.2022--012/0

2. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ութերորդ գումարման երրորդ նստաշրջանի օրակարգում լրացուցիչ ընդգրկել գլխադասային հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստացած հետեւյալ հարցերը.

	Հարցի անվանումը	**Կոդը և հեղինակները**
1.	**ա)** «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին	Կ-**164**-14.02.2022,**06.04.2022**-ԱՍ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
	բ) «Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին	Կ-**164**[1]-14.02.2022,**06.04.2022**-ԱՍ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
2.	Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին	Կ-**165**-14.02.2022-ՏՀ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
3.	Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին	Պ-**172**-23.02.2022-ՏՏԳՇ-011/0 Հեղինակներ՝ Խաչատուր Սուքիասյան, Վաղարշակ Հակոբյան
4.	«Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակումների դեմ պայքարի եւ դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2005 թվականի նոյեմբերի 25-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին	Կ-**185**-04.03.2022-ՊԱ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
5.	«Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի կապի համատեղ (միավորված) համակարգի մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին	Կ-**189**-07.03.2022-ՊԱ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
6.	**ա)** «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին	Պ-**180**-02.03.2022-ՖՎ-011/0 Հեղինակներ՝ Գեւորգ Պապոյան, Ծովինար Վարդանյան
	բ) «Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին	Պ-**180**[1]-02.03.2022-ՖՎ-011/0 Հեղինակներ՝ Գեւորգ Պապոյան, Ծովինար Վարդանյան
	գ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին	Պ-**180**[2]-02.03.2022-ՖՎ-011/0 Հեղինակներ՝ Գեւորգ Պապոյան, Ծովինար Վարդանյան

7.	«Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջեւ 2020 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին	Կ-**199**-15.03.2022-ՖՎ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

3. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ութերորդ գումարման երրորդ նստաշրջանի օրակարգում լրացուցիչ ընդգրկել գլխադասային հանձնաժողովների կողմից բացասական եզրակացություն ստացած, ինչպես նաեւ Կանոնակարգով սահմանված ժամկետում եզրակացություն չստացած հետեւյալ հարցերը.

	Հարցի անվանումը	**Կոդը և հեղինակները**
1.	«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին	Խ-**162**-10.02.2022-ԱՍ-011/0 Հեղինակ՝«Հայաստան» խմբակցություն